

Ա.Գ.Սախարովի անվան Մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն

Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի
առաջին ատյանի դատարանների աշխատանքի պայմանների
մոնիտորինգի զեկույց

Ուսումնասիրությունների անցկացումը և զեկույցի կազմումը հնարավոր եղավ շնորհիվ ԵԱՀԿ-ի
Հայաստանյան գրասենյակի ու Վարչապալի մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամի
փորձագիտական ու ֆինանսական աջակցության

Ներածություն

«Ա.Գ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական
կենտրոն» հասարակական կազմակերպության առաքելությունն է՝ աջակցել Հայաստանում
քաղաքացիական հասարակության կառուցմանը, բարձրացնել բնակչության իրավական
գիտելիքների մակարդակը, պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու
ազատությունները: Կազմակերպությունն ունի երեք տարածաշրջանային մասնաճյուղ Շիրակի
/Գյումրի/, Գեղարքունիքի /Գավառ/ և Սյունիքի /Գորիս/ մարզերում:

Երեք մասնաճյուղերի ներկայացուցիչները 2001թ. մասնակցել են ԵԱՀԿ-ի
հայաստանյան գրասենյակի և Վարչապալի Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամի
կողմից Լուսակերտում կազմակերպված «Մոնիտորինգ և Մարդու իրավունքներ» սեմինարների
շարքին և որպես սեմինարների գործնական շարունակություն դատական համակարգի
բարեփոխումների շրջանակում իրագործել են «Առաջին ատյանի դատարանների պայմանների
մոնիտորինգի» ծրագիր Հայաստանի Հանրապետության Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի
մարզերում: Ծրագիրը նպատակ էր հետապնդում բացահայտել մարզերի դատական
մարմինների աշխատանքի առկա պայմանները, քանի որ

***իշխանության երրորդ ճյուղի գործունեության պայմանները և ենթակառուցվածքը մեծ
նշանակություն ունեն նրա դիրքորոշման, դերի և հեղինակության բարձրացման, համաձայն
գործող օրենսդրության, քաղաքացիների՝ խելամիտ ժամկետում և արդար, հրապարակային
դատաքննության իրավունքի ապահովման գործում:***

Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական համակարգի բարեփոխումների
հայեցակարգը ձևավորվեց 1995 թ. ընդունված ՀՀ Սահմանադրությամբ: Դատաիրավական
բարեփոխումների հիմնական նպատակը խորհրդային դատական համակարգի փոխարինումն
էր իրավունքի համակարգի վրա հիմնված բաց դատական ձևին և դատական համակարգի
հարմարեցումն է ժողովրդավարական պահանջներին: Ժողովրդավարության և իրավական
պետության կառուցման ուղիով ընթացող պետության համար խիստ կարևոր է որոշել
դատական իշխանության տեղը, դերը և վարկը: Հայաստանի Հանրապետության

Մահմանադրությունը դատարանին վերապահել է օրենքի գերակայության հաստատման երաշխավորի և մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմի դերը:

Այնուհայտ է, որ անցումային երկրներում մարդու իրավունքների բնագավառում խախտումների մեծ մասը դատական համակարգի անկատարության հետևանք է: Այդպիսի պետության մեջ ամենակարևոր նշանակությունը ստանում է արդարադատության համակարգը, որի խնդիրն է հաստատել օրենքի գերակայություն՝ միայն օրենքին ենթակա, ազատ ու անկաշկանդ գործող դատական համակարգ ստեղծելով:

Մոնիտորինգի համար հենց այդ նպատակի ընտրությունը թելադրված էր ***նրա առաջնայնությանը և արդիականությանը, քանի որ առաջին ատյանի դատարանների աշխատանքային պայմանների համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրությանը և միջազգային չափանիշներին մեծապես կնպաստի արդար դատավարության կայացմանը, դատավարության մասնակից բոլոր կողմերի անվտանգության և իրավունքների պահպանությանը: Դա կարևոր էր նաև այն տեսանկյունից, որ ուսումնասիրության ոլորտը, ելնելով բազմաթիվ ենթակայական և առարկայական պատճառներից, դուրս է մնացել դատական համակարգի բարեփոխումների գործընթացից և համապատասխան նորմատիվային փաստաթղթերով ու մեխանիզմներով ամրապնդված չէ: Երրորդ կարևոր դրդապատճառն այն էր, որ ուսումնասիրվող ոլորտի նորմալ գործունեությունը բխում է ողջ հասարակության շահերից և, առաջին հերթին, այդ հասարակության մոտ համարժեք հեղինակություն չվայելող դատական մարմինների շահերից: Իհարկե, խոսքը չափազանց երկարաժամկետ և ֆինանսական ու այլ ներդրումներ պահանջող ոլորտի մասին է, սակայն լիարժեք աշխատանքային պայմանների ստեղծման հրամայականը պահանջում է բարեփոխումը խթանող մոնիտորինգի ու հանրային քարոզչության գործընթացները սկսել առանց հետաձգման:***

Ծրագրի շրջանակներում վերոհիշյալ մարզերի առաջին ատյանի դատարանների շենքերի և աշխատատեղերի տեխնիկական ու սանիտարահիգիենիկ պայմանների մոնիտորինգը ներառում էր դիտորդական աշխատանք և հարցազրույցներ դատավորների ու դատարանների աշխատակիցների հետ: Մոնիտորինգի արդյունքների մասին զեկուցագիրը կներկայացվի ՄԱԿ-ի և եվրոպական համապատասխան կառույցներ, ՀՀ Նախագահի աշխատակազմ, Ազգային Ժողով, ՀՀ Կառավարություն, ԵԱՀԿ-ի հայաստանյան գրասենյակ, Արդարադատության նախարարություն, Դատարանների նախագահների խորհուրդ, ՀՀ առաջին ատյանի բոլոր դատարաններ, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, իրավապաշտպան ոլորտի ՀԿ-ներ, ՋԼՄ-ներ, կծավալվի հանրային քաղաքականության քարոզչություն՝ լուծելու առաջնահերթ և երկարաժամկետ հիմնախնդիրները:

Ուսումնասիրություններն ու մոնիտորինգը անցկացվել են օգոստոս-նոյեմբեր ամիսներին մեր կազմակերպության, նրա մասնաճյուղերի, Լուսակերտի սեմինարների այլ մասնակիցների ու մեր կազմակերպության կամավորների կողմից:

Մոնիտորինգին մեծապես և պատրաստակամորեն աջակցել են համապատասխան դատարանների աշխատակիցները:

Մոնիտորինգի հիմնական հետևությունները.

- ◆ *Դատական իշխանության գործունեության լիարժեքության ապահովումը առաջնահերթ պահանջում է անհրաժեշտ բոլոր միջոցների ու հնարավորությունների հատկացում արդարադատության համակարգին: Աշխատանքային նորմալ պայմաններ չունենալու պատճառով դատարանի լիազորությունները չեն կարող լիարժեք իրականացվել: Դատարանի նկարագիրը չափորոշիչ է պետության նկարագրի համար:*

- ◆ *Դատարանների շենքային պայմանների անհամապատասխանությունն ընդունված չափորոշիչներին և ենթակառուցվածքի բացակայությունը չեն նպաստում, իսկ շատ դեպքերում նաև խոչընդոտում են դատարանների և դատավորների բնականոն գործունեությանը և առաջացնում դժվարություններ արդարադատության իրականացման, կողմերի դատավարական իրավունքների լիարժեք ապահովման գործընթացի համար:*
- ◆ *Բոլոր դատարաններն ու դատավորները գործում են գերծանրաբեռնված՝ բազմաթիվ առարկայական և ենթակայական պատճառներով:*
- ◆ *Չկա դատարանների և դատավորների անվտանգության ապահովման հստակ համակարգ, դատական նիստերի դահլիճների հստակ ֆունկցիոնալ բաժանում և կահավորում, ավարտված և ընթացիկ գործերի պահպանության ապահով տարածքներ:*
- ◆ *Դատարաններն ապահոված չեն ժամանակակից համակարգչային տեխնիկայով, սարքավորումներով (համակարգիչ, տպիչ, պատճենահան) և կապով (էլեկտրոնային կապ, հեռատիպ):*
- ◆ *Դատարանների շենքերից ոչ մեկը հարմարեցված չէ հաշմանդամների համար, որը դատարանի հրապարակայնության և դատարանի մատչելիության իրավունքի ապահովմանը խոչընդոտ հանդիսացող հանգամանք է, այն դեպքում, որ հաշմանդամները Հայաստանի Հանրապետության լիիրավ քաղաքացիներ են:*
- ◆ *Դատարանների լիարժեք աշխատանքին և անկախությանը չեն նպաստում նաև նույն շենքում այլ կառույցների առկայությունը:*
- ◆ *Դատարանների լիարժեք աշխատանքին չի նպաստում նաև օժանդակ կառույցների բացակայությունը՝ խորհրդակցական սենյակ, վկաների կամ կողմերի սենյակ, ամբաստանյալի սենյակ, դատական գործերի հետ ծանոթանալու սենյակ, գրադարան, համակարգչային սենյակ, արխիվ, իրեդեն ապացույցների սենյակ, հանդերձարան, բուֆետ, հանգստի սենյակ, անհրաժեշտ քանակությամբ սանհանգույցներ, սպասարկող անձնակազմի սենյակ, անվտանգություն ապահովող ծառայողների սենյակ և այլն:*
- ◆ *Դատարանների շենքերը և նիստերի դահլիճները ապահովված չեն համապատասխան պետական խորհրդանիշներով և տեղեկատվություն ապահովող ցուցատախտակներով, որը չի նպաստում դատարանի հեղինակության բարձրացմանը:*

Մեր կազմակերպությունը հայտնում է իր երախտագիտությունը ԵԱՀԿ-ի հայաստանյան գրասենյակին, մասնավորապես, գրասենյակի առաջին քարտուղար, մարդու իրավունքների հարցերով պատասխանատու Քրիստինե Մարդիրոսյանին, Վարչավարչի մարդու իրավունքների հելփինկյան հիմնադրամին, մասնավորապես, կազմակերպության նախագահ Մարեկ Նովիցկուն, աշխատակից Ջուզանա Ֆիալովային և մյուսներին՝ սեմինարների կազմակերպման և ծրագրի նախապատրաստման ու իրականացման ընթացքում փորձագիտական և ֆինանսական աջակցության համար, ՀՀ Դատարանների նախագահների խորհրդի նախագահ Հ.Դանիելյանին՝ ծրագրով նախատեսված ուսումնասիրությունների համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նախաձեռնության համար, երեք մարզերի առաջին ատյանի դատարանների նախագահներ՝ պարոններ Է.Մանուկյանին, Վ. Նիկոլյանին, Մ. Ասատրյանին՝ ծրագրի իրագործման փուլում շահագրգիռ աջակցության և անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում նաև Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոնի տնօրեն Լևոն Ներսիսյանին՝ երեք տարածաշրջաններում անցկացվող ուսումնասիրությունները ներդրումով համադասելու համար, իրավաբաններ Արտուշ Գրիգորյանին, Մանուշ Նալբանդյանին, Յուրի Պետրոսյանին ոլորտի օրենսդրության և նորմատիվային ակտերի վերլուծության ու ուսումնասիրությունների, դիտարկումների, հարցաթերթիկների կազմման համար, սոցիոլոգ Արմինե Մխիթարյանին՝ մոնիտորինգի հարցաթերթիկների կազմման, տեղեկատվության հավաքման, ուսումնասիրությունների անցկացման ու վերլուծության համար, կազմակերպության անդամներ և կամավորներ Սուսաննա Մխիթարյանին, Ռուզաննա Ավագյանին, Նարինե Արամյանին, Գայանե Սարուխանյանին, Արմեն Պետրոսյանին, Գայանե Հարությունյանին, Կառլեն Կոզմանովին, Լուսինե Թովլադալցյանին ծրագրի իրագործման բոլոր փուլերում կատարած իրենց ներդրման համար:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Բաժին 1. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԱՌՆՉՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային մի շարք փաստաթղթեր, դրանցում ամրագրված հիմնական դրույթները ներառել է իր ներպետական օրենսդրության մեջ:

ԹԾ ԵՅՆՍՅՅ՝ՆԱՕՁԱՕՁՅ՝

Թձ՝Բ՝ 4. Պետությունը ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Թձ՝Բ՝ 16. Բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով:

Թձ՝Բ՝ 38. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

Թձ՝Բ՝ 39. Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք (...):

Թձ՝Բ՝ 91. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունը իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Այս հոդվածները համապատասխանում են «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 7-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածներին, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետին, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի» 6-րդ հոդվածի 1-ին կետին, ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշի խորհրդատու Վի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթի (5.16) կետին:

ԹՅՆ՝ԱՕ ԱԵՆ՝ԻԱՕՅՆՅ՝ՆՇ ԹՅ՝ԱՎՅ՝ՆՅ՝ՅԱՕՆ ԹԵՁ՝Բ՝ՇՆ

Թձ՝Բ՝ 7. Բոլորը հավասար են օրենքի առջև, և առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանության իրավունք: Բոլորը ունեն հավասար պաշտպանության իրավունք՝ ընդդեմ ցանկացած խտրականության, որով խախտվում է այս հռչակագիրը, և ընդդեմ նման խտրականության մղող ցանկացած սադրանքի:

Թձ՝Բ՝ 8. Ասեն որ ունի ազգային լիազոր դատարանի միջոցով իր իրավունքների արդյունավետ վերականգնման իրա-վունք, եթե խախտվում են Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված նրա հիմնական իրավունքները:

Թձ՝Բ՝ 10. Յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու պարտականությունները ճշտելու և իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար, լիակատար հավասարության հիման վրա, իրավունք ունի այն բանի, որ իր գործը հրապարակայնորեն և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից:

ՅՕՆՅՕՑԻՅ՝ ՆՕՆՅՐՅՑ ԸՆԴՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԵՑԻ ԱՍՏՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԵՑԻ ԱՍՏՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԵՑԻ ԱՍՏՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԵՑԻ ԱՍՏՅՈՒՆՆԵՐԻ

ՃՅԻՅ 14.

1. Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած մեղադրանք քննելու կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքներն ու պարտականությունները որոշելու ընթացքում ունի օրենքի վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակավ քննության իրավունք (...):

ՅՕՆՅՕՑԻՅ՝ ՆՕՆՅՐՅՑ ԸՆԴՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԵՑԻ ԱՍՏՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԵՑԻ ԱՍՏՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԵՑԻ ԱՍՏՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԵՑԻ ԱՍՏՅՈՒՆՆԵՐԻ

ՃՅԻՅ 6.

1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում, են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ իրեն ներկայացված ցանկացած քրական մեղադրանքի քննարկման դեպքում, իրավունք ունի գործի արդարացի հրապարակային դատաքննության՝ խելամիտ ժամկետում, օրենքի հիման վրա ստեղծված անկախ և նաչառ դատարանի կողմից (...):

ՅՕՆՅՕՑԻՅ՝ ՆՕՆՅՐՅՑ ԸՆԴՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԵՑԻ ԱՍՏՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԵՑԻ ԱՍՏՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԵՑԻ ԱՍՏՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԵՑԻ ԱՍՏՅՈՒՆՆԵՐԻ

(5.16) - Ամեն մարդ իրեն ներկայացված ցանկացած մեղադրանք քննելիս կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքներն ու պարտականությունները քննարկելիս իրավունք ունի արդարացի և դժբաղ քննության՝ օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ և նաչառ դատարանի կողմից:

Դատավճիռներ, վճիռներ, որոշումներ կայացնելիս դատավորները կարող են ազատորեն վկայակոչել միջազգային իրավական ակտերի նորմերը, որը մեր դատական պրակտիկայում շատ հազվադեպ է տեղի ունենում: Մինչդեռ ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածով ամրագրված է.

ՃՅԻՅ 6. (...) Վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը:

1985 թ. 26 օգոստոսի-6 սեպտեմբերի ՄԱԿ-ի 7-րդ կոնգրեսի կողմից ընդունված «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքներին» համապատասխան՝

ՃՅԻՅ 7. Յուրաքանչյուր անդամ պետություն պարտավոր է համապատասխան պայմաններ ստեղծել՝ դատական մարմիններին հնարավորություն տալով իրենց պարտականությունները կատարել պատշաճ կերպով:

ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի բանաձևով հաստատված «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների արդյունավետ իրականացման ընթացակարգերին» համապատասխան՝

ՃՅԻՅ 1. Բոլոր պետություններն ընդունում են և իրենց դատական համակարգերում իրականացնում Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները՝ իրենց սահմանադրական գործընթացին և ներպետական գործելակերպին համապատասխան:

ՃՅԻՅ 5. Հիմնարար սկզբունքների 8 և 12 սկզբունքներն իրականացնելիս պետությունները առանձնակի ուշադրություն են դարձնում համարժեք ռեսուրսներ տրամադրելու անհրաժեշտությանը՝ դատական համակարգի գործունեության համար, ներառյալ բավարար թվով դատավորների ապահովումը անհրաժեշտ տեխնիկական անձնակազմով ու սարքավորումներով և համապատասխան անձնական անվտանգության, վարձատրության ու բժշկի ապահովումը դատավորների համար:

ՃՅԻՅ 6. Պետություններն աջակցում են կամ խրախուսում ազգային և տարածաշրջանային մակարդակներով սեմինարներ ու դասընթացներ անցկացնելը՝ հասարակության մեջ դատական մարմինների դերի և դրանց անկախության անհրաժեշտության հարցի շուրջ:

երաշխավորված իրավունքները չպետք է ավելի քիչ լինեն, քան երաշխավորում են միջազգային իրավունքի նորմերը:

Ենթաբաժին 1. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարան

Գեղարքունիքի մարզը, ինչպես նախատեսում է օրենքը, ունի մեկ առաջին ատյանի դատարան, որի դատական տարածքը Գեղարքունիքի մարզի վարչական տարածքն է: Մարզի առաջին ատյանի դատարանի նստավայրերը գտնվում են մարզի վարչական տարածքում: Այդ նստավայրերը հինգն են և գտնվում են Գավառ, Սևան, Ճամբարակ, Վարդենիս, Մարտունի քաղաքներում: Նստավայրերից յուրաքանչյուրը սպասարկում է 20-40 կմ շառավղով տարածքներ: Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահի նստավայրը Գավառ քաղաքն է, որը նաև մարզի վարչական կենտրոնն է:

Դիտարկումների ընթացքում առաջին ատյանի դատարանը գործում էր դատարանի նախագահի և 7 դատավորի կազմով, 5 նստավայրերից յուրաքանչյուրում՝ 1 դատավոր, բացառությամբ Գավառի, Սևանի՝ 2 դատավոր:

Ստորև ներկայացվում է այդ կազմը՝

№	Յրթիւն՝ 1/2-Յթիւն, Յթիւն, ՆՅթիւն-Յթիւն	1/4Յթիւն»ճիւն ճՅթիւն	Յթիւն-Յթիւն
1	Յթիւն-Յթիւն 1/2-Յթիւն Յթիւն-Յթիւն	Յթիւն-Յթիւն	Յթիւն-Յթիւն Յթիւն
2	Յթիւն-Յթիւն Յթիւն Յթիւն	Յթիւն	Յթիւն-Յթիւն Յթիւն
3	Յթիւն-Յթիւն Յթիւն Յթիւն-Յթիւն Յթիւն	Յթիւն	Յթիւն-Յթիւն Յթիւն
4	Յթիւն-Յթիւն Յթիւն Յթիւն Յթիւն Յթիւն	Յթիւն	Յթիւն-Յթիւն Յթիւն
5	Յթիւն-Յթիւն Յթիւն Յթիւն Յթիւն Յթիւն Յթիւն	Յթիւն	Յթիւն-Յթիւն Յթիւն-Յթիւն
6	Յթիւն-Յթիւն Յթիւն Յթիւն Յթիւն Յթիւն	Յթիւն	Յթիւն-Յթիւն Յթիւն-Յթիւն
7	Յթիւն-Յթիւն Յթիւն Յթիւն Յթիւն	Յթիւն	Յթիւն-Յթիւն Յթիւն-Յթիւն

Դատավորների ծանրաբեռնվածությունն ունի հետևյալ պատկերը.

2000 թ. ընթացքում քննվել են՝

Յթիւն-Յթիւն	Յթիւն-Յթիւն Յթիւն	Յթիւն-Յթիւն Յթիւն Յթիւն
Յթիւն	91	268
Յթիւն	72	133
Յթիւն-Յթիւն	119	156
Յթիւն-Յթիւն	125	160
Յթիւն-Յթիւն	56	213
Յթիւն-Յթիւն Յթիւն	463	930

2001 Ա. Յթիւն Յթիւն Յթիւն Յթիւն

Յթիւն-Յթիւն	Յթիւն-Յթիւն Յթիւն Յթիւն Յթիւն Յթիւն	Յթիւն-Յթիւն Յթիւն Յթիւն Յթիւն Յթիւն
Յթիւն	129	75
Յթիւն	58	58
Յթիւն-Յթիւն	77	57
Յթիւն-Յթիւն	80	61
Յթիւն-Յթիւն	73	61
Յթիւն-Յթիւն Յթիւն	417	312

«Հայաստանի Հանրապետության դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանի յուրաքանչյուր դատավորի համար նախատեսվում են դատական նիստերի քարտուղարի և օգնականի մեկական հաստիքներ:

Դատարանն ունի աշխատակազմի ղեկավար, հաշվապահ, արխիվապահ և այլ աշխատողներ, կառավարության հաստատած նորմատիվներին համապատասխան»:

վերանորոգվել է 1990 թ.: Առաջին ատյանի դատարանն ունի նստավայրեր Սյունիքի մարզի Կապան, Գորիս, Սիսիան և Մեղրի քաղաքներում: Դատարանն ունի դատարանի մեկ նախագահ և յոթ դատավոր:

2000թ. ընթացքում Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը քննել է 588 քրեական գործ, որոնցից 549-ի վերաբերյալ դատավճիռ և 39 որոշում է կայացվել: Նույն ժամանակահատվածում քննվել է 1380 քաղաքացիական գործ և կայացվել են տարբեր որոշումներ:

2001թ. առաջին կիսամյակի ընթացքում դատարանի կողմից ընդունվել է 385 հայց:

Յուրաքանչյուր դատավորի կողմից տարվա ընթացքում քննվող քրեական գործերի թիվը 60-ից մինչև 80 է, քաղաքացիական գործերի թիվը 180-ից մինչև 220: Դատավորների տարբեր ծանրաբեռնվածությունը պայմանավորված է տարածաշրջանների առանձնահատկություններով:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի աշխատակազմը համապատասխանում է ՀՀ կառավարության հաստատած նորմատիվներին:

Բաժին 4. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր դատարան ֆինանսավորվում է պետական բյուջեից՝ առանձին տողով»:

«ՀՀ առաջին ատյանի ու վերաքննիչ դատարանների աշխատակազմերի հաստիքային միավորների նորմատիվները հաստատելու և անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» ՀՀ կառավարության կողմից 1998 թ. դեկտեմբերի 18-ի ընդունված թիվ 808 որոշման 2-րդ կետով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը հանձնարարված է.

«Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների գործունեության համար անհրաժեշտ գույք, տնտեսական ապրանքներ ձեռք բերելու և այլ անհրաժեշտ ծախսերի համար 1999 թվականին հնարավորության դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը ֆինանսական միջոցներ հատկացնել առաջնահերթ կարգով»:

Ենթաբաժին 1. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարան

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի շենքային, աշխատանքային, նյութական ու ֆինանսական վիճակը բարվոք չէ, և այն ուղղակի և անուղղակի կերպով ազդում է արդարադատության իրականացման վրա:

5 նստավայրերում էլ դատարաններն ապահովված են շենքով: Գավառի, Վարդենիսի և Ճամբարակի նստավայրերի դատարանի շենքերը խորհրդային տարիներին կառուցվել են որպես դատարանական շենքեր: Սևանի նստավայրի դատարանի շենքը նախկինում եղել է մանկապարտեզի շենք, իսկ Մարտունուն՝ քաղխորհրդի գործկոմի շենք:

Դատարանական շենքերն առանց ցուցանակի են կամ ունեն խորհրդային շրջանի հին ու անբարետես ցուցանակներ: Շենքերի վրա բացակայում է դատական իշխանության խորհրդանիշը՝ ՀՀ դրոշը: Լուծված չեն դատարանական շենքերի պաշտպանության հարցերը: Անբարեկարգ են դատարանական շենքերին հարակից տարածքները: Դատական նիստերի դահլիճների կահավորումը թերի է: Դահլիճները չեն ջեռուցվում: Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատական նիստերի դահլիճներն, ըստ էության, համարյա չեն էլ

օգտագործվում (ջեռուցվող շինելու, անբարտեսության, նորմալ կահույք չունենալու և այլ պատճառներով): Դատավորները ստիպված շատ դեպքերում դատական նիստերը վարում են իրենց աշխատասենյակներում:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանը օգտագործում է խորհրդային ժամանակներից մնացած գույքը: Յուրաքանչյուր նստավայրում կա ֆիզիկապես և բարոյապես մաշված մեկ կամ երկու տպագրական մեքենա, չկան համակարգիչներ, պատճենահանող սարք, ֆաքս:

Ֆինանսական միջոցների սղության պատճառով դատավորների անձնական միջոցների հաշվին են կատարվում իրենց աշխատասենյակների ու հանգստի սենյակների վերանորոգումն ու կահավորումը, փոստային առաքումները, պատճենահանման ծառայությունները, անհրաժեշտ գրականության, գրենական պիտույքների ձեռք բերման հետ կապված ծախսերը, արտագնա դատական նիստեր վարելու նպատակով տրանսպորտային ծախսերը և այլն:

«Հայաստանի Հանրապետությունում դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝

Ճճ'ԲՂ 21. Դատավորի աշխատասենյակը

Դատավորն ունի առանձին ծառայողական աշխատասենյակ կառավարության սահմանած տիպային կահավորման ցանկին համապատասխան: Դատավորի աշխատասենյակում պետք է տեղադրված լինի հանրապետության տարածքում հեռա-խոսակապ հաստատելու միջոց:

Դատավորի աշխատասենյակում առկա է Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը, իսկ աշխատասեղանի մոտ տեղադրվում է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի բոլոր նստավայրերը ունեն մեկական հեռախոսի կետ և հեռախոսավարձի մեծ պարտքեր: Պարզապես հեռախոսակապը չի անջատվում շնորհիվ դատարանի և դատավորի նկատմամբ հարգանքի: Վարդենիսի նստավայրի դատավորը օգտվում է դատական ակտերի հարկադիր կատարման գրասենյակի հեռախոսից, որը տեղակայված է շենքի առաջին հարկում:

Բոլոր դատավորների աշխատասենյակներում առկա է ՀՀ զինանշանի պատկերը, սակայն աշխատասեղանների մոտ տեղադրված չէ Հայաստանի Հանրապետության պետական դրոշը. վերջինիս փոխարեն աշխատասեղանների վրա տեղադրված են փոքրիկ ՀՀ դրոշակներ: Նույն օրենքի համաձայն՝

Ճճ'ԲՂ 31. Դատարանի շենքի վրա բարձրացվում է Հայաստանի Հանրապետության դրոշը:

Դատարանի նիստերի դահլիճում առկա է Հայաստանի Հանրապետության զինանշանը և տեղադրված է Հայաստանի Հանրապետության դրոշը:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի հինգ նստավայրերից միայն Մարտունու նստավայրի շենքն է իր վրա կրում դատական իշխանության խորհրդանիշ հանդիսացող Հայաստանի Հանրապետության դրոշը: Դատական նիստերի դահլիճներից ոչ մեկում առկա չէ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը, տեղադրված չէ Հայաստանի Հանրապետության դրոշը, որպես դատական իշխանության խորհրդանիշ:

Գեղարքունիքի մարզում ապահովված չէ դատարանի մատչելիությունը: Միշտ չէ, որ մարդը հասարակական տրանսպորտով հնարավորություն ունի իր բնակավայրից հասնել մարզի առաջին ատյանի դատարանի մոտակա նստավայրը: Չկա բավարար քանակությամբ հասարակական տրանսպորտ: Օրինակ՝

որպեսզի Գեղարքունիքի մարզի Կախակն գյուղի բնակիչը կարողանա գնալ առաջին ատյանի դատարանի մոտակա՝ Վարդենիսի նստավայր, պետք է օգտվի հասարակական տրանսպորտի ծառայությունից, որն աշխատում է հետևյալ գրաֆիկով՝ շաբաթը մեկ անգամ, հինգշաբթի օրերին, մեկնում ժամը 10.00-ին, վերադարձ ժամը 14.00-ին: Դատավորին կամ

դատարանի աշխատողին աշխատատեղում չգտնելով՝ նա պետք է դատարան այցելի հաջորդ շաբաթ, իսկ դատարան գնալուց առաջ դատարան զանգելու և ինչ-որ բան ճշտելու հնարավորություն չկա, որովհետև և՛ դատարանը հեռախոս չունի, և՛ այցելում:

Այս ամենի ֆոնի վրա պատկերացնենք նաև մարդկանց սոցիալական վատ վիճակը և վճարունակ չլինելու հանգամանքը:

Անմխիթար է նաև դատարանի սանիտարական վիճակը: Գավառի նստավայրում այցելուների համար զուգարան չկա, իսկ ծառայողների համար եղածը փակվում է բանալիով, և այդ զուգարաններում ջուր չկա: Սևանի և Մարտունու նստավայրերում կան մեկական ընդհանուր զուգարաններ, ճամբարակի նստավայրում ոչ մեկը չկա, Վարդենիսի նստավայրում կան չգործող սանհանգույցով 2 զուգարաններ:

Բացի Գավառի նստավայրից ոչ մի նստավայրում բուֆետ չկա:

Հաշմանդամների համար ոչինչ նախատեսված չէ, մինչդեռ նրանք նույնպես համարվում են ՀՀ լիիրավ քաղաքացիներ:

Բոլոր նստավայրերում էլ չկան իրավաբանական գրադարաններ, որոնք ապահովված լինեն անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ: Դատարանի նստավայրերից ոչ մեկի շրջակայքում չկան կրպակներ, որտեղ վաճառվեն թերթեր, կամ իրավական գրականություն, դատարանի շենքերում և նրանց հարակից տարածքում չկան հեռախոսի ապարատներ:

Կարևոր հարց է նաև դատավորների մասնագիտական գիտելիքների և պատրաստվածության բարձրացումը: «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների» 10-րդ կետին համապատասխան՝ «Դատական պաշտոնում ընտրված անձինք պետք է ունենան բարոյական բարձր հատկանիշներ և ընդունակություններ, նաև համապատասխան պատրաստվածություն և որակավորում՝ իրավունքի բնագավառում», իսկ «Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքների» 9-րդ կետին համապատասխան՝ «Կառավարությունները, իրավաբանների արհեստակցական միավորումները և ուսումնական հաստատություններն ապահովում են իրավաբանների պատշաճ որակավորումն ու պատրաստումը և նրանց կողմից մասնագիտական իդեալների ու բարոյական պարտականությունների, ինչպես նաև ազգային և միջազգային իրավունքի ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իմացությունը»:

Դատավորների հետ անցկացված հարցազրույցներից տեղեկացանք, որ նրանք ցանկություն ունեն հաճախակի մասնակցել որակավորման բարձրացման դասընթացների, միջազգային կազմակերպությունների կողմից դատական բարեփոխումներին առնչվող թեմաներով կազմակերպվող սեմինարներին:

Օրենսդրական փոփոխությունները չեն առաքվում դատավորներին: Վերջին շրջանում դատավորներին տրամադրվել են միայն որոշ օրենսգրքեր, մինչդեռ նորմատիվային բազան պետք է միշտ մատչելի լինի դատավորին:

«Հայաստանի Հանրապետության դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության դատարաններում գործերի քննությունը դռնբաց է (...):»:

Դատական նիստի կայացման ժամկետների մասին գործին մասնակցող անձինք պարտադիր տեղեկացվում են: Ընթացիկ դատավարությամբ հետաքրքրվողները դատական նիստերի մասին տեղեկանում են հենց կողմերից: Մեր ուսումնասիրությունների ընթացքում Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի ոչ մի նստավայրի շենքում դատական նիստերի կայացման վերաբերյալ հայտարարություն մենք չնկատեցինք: Սա նշանակում է, որ նրանք, ովքեր հետաքրքրված են գործի քննությամբ, ինչ-որ կերպ կտեղեկանան և կմասնակցեն գործի քննությանը, իսկ «պատահական» այցելուները տեղեկություններ իմանալու համար պետք է ապավինեն միայն դատարանի աշխատողների բարեհաճությանը: Գործնականում

Հայաստանում դատավարությանը մասնակցում են միայն դատավարության ընթացքով հետաքրքրված մարդիկ. ընդունված է այդպես:

Հայտարարությունների տախտակներ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի նստավայրերում չկան: Միայն Սևանի նստավայրում փակցված էր 2 դատավորների ընդունելության օրերն ամսվա ընթացքում: Իսկ Ճամբարակի նստավայրում մի խունացած թղթի վրա տպագրված էին դատական պետտուրքերի դրույքաչափերը:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի բոլոր նստավայրերում էլ քաղաքացիները դատարանի շենքի ողջ տարածքում ազատ տեղաշարժվելու հնարավորություն ունեն: Տեղաշարժի առումով անվտանգ կամ սահմանափակ համարվող գոտիներ ոչ մի նստավայրում չկան: Մուտքը հսկվում է միայն Սևանի նստավայրում ՆԳ բաժնի աշխատակցների կողմից, սակայն դատարան այցելած անձինք կարող են ազատ տեղաշարժվել շենքում:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի նստավայրերի համառոտ նկարագիրը

Գավառի նստավայր

Չնայած որ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի Գավառի նստավայրի շենքը կապիտալ վերանորոգվել է 1999 թ., սակայն դեռևս լուրջ ներդրումների կարիք ունի: Նստավայրի ցուցանակը, գրված հայերեն և ռուսերեն լեզուներով՝ «ՀՀ արդարադատության նախարարության Կամոյի շրջանի ժող. դատարան», չի նորացվել: Դատարանը չունի բավարար կահույք, կազմտեխնիկա, չունի ծառայողական ավտոմեքենա: Դատարանի շենքում են գործում անձնագրային սեղանը, պետավտորեսչությունը, նոտարական գրասենյակը, դատական ակտերի հարկադիր կատարման գրասենյակը: Շենքի աջ թևը զբաղեցնում է ոստիկանությունը:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի Գավառի նստավայրի քրեական գործերով դատական նիստերի դահլիճը գտնվում է բարվոք վիճակում: Դահլիճը չունի վկաների, ամբաստանյալի, դատավարության մասնակիցների՝ փաստաբանի, պետական մեղադրողի համար սենյակներ: Դահլիճում դատավարության գոտին առանձնացված չէ հասարակական գոտուց: Դատավարության գոտում փաստաբանների համար տեղեր առանձնացված չեն. փաստաբանը նստում է պետական մեղադրողի կողքին՝ դեմքով դեպի ամբաստանյալը: Դատավորի համար խորհրդակցական սենյակ կա, որի կահավորանքը կազմում է ընդամենը մեկ աթոռ: Խորհրդակցական սենյակը չունի սանհանգույց: Դատավորը դահլիճ է մտնում նույն մուտքից, որից ներս են մտնում դատավարության մասնակիցները և հասարակությունը: Դատավորի տեղաշարժի ուղիները մեկուսացված չեն հասարակության հետ շփվելու հնարավորությունից: Դատավորի աշխատասենյակից դեպի դահլիճ ծառայողական մուտք չկա: Դահլիճը չի ջեռուցվում, և տեղի կլիմայական պայմաններում առնվազն 6 ամիս անօգտագործելի է:

Միայն Գավառի նստավայրում է, որ կա քաղաքացիական գործեր լսելու համար դատական նիստերի դահլիճ: Սակայն այն չունի համապատասխան կառուցվածք և կահավորում: Դատավարության գոտին անջատված չէ հասարակական գոտուց: Դահլիճը չունի դատավորի խորհրդակցական սենյակ, սենյակ վկաների համար, դահլիճում չկան նախատեսված հատուկ տեղեր հայցվորի և պատասխանողի համար, վկայի համար ամբիոն չկա: Ունի մեկ մուտք դատավորի և դատավարության բոլոր մասնակիցների համար: Դատավորը, դատավարության մյուս մասնակիցները և հասարակությունը նստում են նույն հարթության մեջ: Այս դահլիճը նույնպես չի ջեռուցվում:

Այս նստավայրում կա ևս մեկ դահլիճ, որն ընդհանրապես կահավորված չէ և դեռևս վերանորոգման կարիք ունի:

Սևանի նստավայր

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի Սևանի նստավայրը տեղակայված է նախկին մանկապարտեզի շենքում: Միակ դատական շենքն է, որը պահպանվում է ՆԳ բաժնի ծառայության կողմից:

Սևանի նստավայրն ունի մեկ դատական նիստերի դահլիճ: Հասարակության համար տեղադրված նստարանները բարվոք վիճակում չեն: Դատավարության գոտին առանձնացված է հասարակական գոտուց արգելափակոցով: Ցուցմունք տվողների համար տեղադրված է ամբիոն: Դահլիճը չունի վկաների սենյակ: Ունի ամբաստանյալի սենյակ, որը չունի ուղղակի մուտք դեպի դահլիճ: Դահլիճը չունի դատավարության մասնակիցների՝ փաստաբանի, պետական մեղադրողի համար սենյակներ: Դատավարության գոտում փաստաբանի համար առանձնացված է տեղ, փաստաբանը նստում է պետական մեղադրողի դիմաց, մեջքով դեպի ամբաստանյալը: Դահլիճն ունի խորհրդակցական սենյակ, որի կահավորանքը կազմում է ընդամենը մեկ աթոռ: Խորհրդակցական սենյակը չունի սանհանգույց: Դատավորը դահլիճ է մտնում դատավարության գոտում տեղակայված նույն մուտքից, որով բերում են նաև ամբաստանյալին: Հասարակությունը դահլիճ է մտնում դահլիճի հասարակական գոտու կողմից՝ ուղղակի դրսից: Դատավորի տեղաշարժի ուղիները մեկուսացված են հասարակության հետ շփվելու հնարավորությունից, քանի որ հասարակությունը դահլիճ է ելումուտ անում դրսից: Դատավորի աշխատասենյակից դեպի դահլիճ ծառայողական մուտք չկա: Դահլիճը չի ջեռուցվում և տեղի կլիմայական պայմաններում առնվազն 6 ամիս այն անօգտագործելի է:

Դահլիճն անբարետես է, պատերը ներկված են տհաճ մուգ կապույտ գույնով:

Ճամբարակի նստավայր

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի Ճամբարակի նստավայրը տեղակայված է միհարկանի հնակառույց խարխուլ շենքում, չունի նկուղային հարկ, գտնվում է շատ անմխիթար վիճակում և բոլորովին չի համապատասխանում նորմատիվային չափանիշներին: Այն պատերազմական գործողությունների ժամանակ վնասվել է ռմբահարումներից: Աշխատանքային պայմաններն անբարենպաստ են: Շենքը չունի ցուցանակ: Նստավայրն ունի դատական նիստերի մեկ դահլիճ, որը փոքրիշատե կահավորված է: Դատավարության գոտին առանձնացված է հասարակական գոտուց արգելափակոցով: Դահլիճը չունի սենյակներ վկաների և ամբաստանյալի, ինչպես նաև դատավարության մասնակիցների՝ փաստաբանի, պետական մեղադրողի համար: Ցուցմունք տվողների համար կա ամբիոն: Դատավարության գոտում առանձնացված չեն տեղեր փաստաբանի և մեղադրողի համար: Դահլիճը չունի խորհրդակցական սենյակ, սակայն դատավորի աշխատասենյակից դեպի դահլիճ կա մուտք (ծառայողական). դատավորի աշխատասենյակը օգտագործվում է որպես խորհրդակցական սենյակ: Սակայն, ինչպես նշվեց, ոչ դատավորի աշխատասենյակը, ոչ էլ նստավայրը չունեն սանհանգույց: Դատավորը դահլիճ է մտնում դատավարության գոտում տեղակայված մուտքից՝ իր աշխատասենյակից, ամբաստանյալին դահլիճ են բերում հասարակական գոտու կողմից, նույն մուտքից, որով հասարակությունը մտնում է դահլիճ: Հասարակությունը դահլիճ մտնում է ուղղակի դրսից, և դատավորի տեղաշարժի ուղիները մեկուսացված են հասարակության հետ շփվելու հնարավորությունից: Դահլիճը չի ջեռուցվում, և տեղական կլիմայական պայմաններում առնվազն 6 ամիս այն անօգտագործելի է: Դահլիճի

պատերից ներկը թափված է, փայտե առաստաղը՝ ճկված: Մտավախություն կա, որ մի օր, դատավարության ընթացքում առաստաղը կիջնի:

Նստավայրը չունի հավաքարարի կողմից օգտագործվող իրերի խորդանոց. ավելն դրվում է գրասենյակի պահարանի գլխին՝ կրծողներից պաշտպանելու համար:

Վարդենիսի նստավայր

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի Վարդենիսի նստավայրը տեղակայված է երկհարկանի շենքում: Նույն շենքում տեղակայված են նաև դատախազությունը և դատական ակտերի հարկադիր կատարման գրասենյակը: Շենքը չունի ցուցանակ: Վարդենիսի նստավայրն ունի դատական նիստերի մեկ դահլիճ: Հասարակության համար տեղադրված նստարանները բարվոք վիճակում չեն: Դատավարության գոտին առանձնացված չէ հասարակական գոտուց: Դահլիճը չունի սենյակներ վկաների և ամբաստանյալի համար, ինչպես նաև դատավարության մասնակիցների՝ փաստաբանի, պետական մեղադրողի համար: Յուրմունք տվողների համար կա ամբիոն: Դատավարության գոտում առանձնացված են տեղեր փաստաբանի և մեղադրողի համար: Ամբաստանյալների համար նախատեսված ենթագոտին տեղակայված է պատուհանի տակ: Դահլիճն ունի խորհրդակցական սենյակ՝ առանց կահավորանքի, որը չունի սանհանգույց: Առհասարակ, դատարանի ողջ սանհանգույցը չի աշխատում: Դատավորը դատական նիստերի դահլիճ կարող է մտնել դատավարության գոտում տեղակայված մուտքից՝ խորհրդակցական սենյակով: Ամբաստանյալին դահլիճ են բերում հասարակական գոտու կողմից, նույն մուտքից, որով հասարակությունը մտնում է դահլիճ: Դատավորի տեղաշարժի ուղիները մեկուսացված չեն հասարակության հետ շփվելու հնարավորությունից: Դատավորի աշխատասենյակից դեպի դահլիճ ծառայողական մուտք չկա: Դահլիճը չի ջեռուցվում, և տեղական կլիմայական պայմաններում առնվազն 6 ամիս այն անօգտագործելի է: Դահլիճի պատուհանների ապակիները ջարդված են:

Մարտունու նստավայր

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի Մարտունու նստավայրը տեղակայված է նախկին քաղաքային խորհրդի երկհարկանի շենքում: Նույն շենքում տեղակայված են նաև դատական ակտերի հարկադիր կատարման գրասենյակը և նոտարական գրասենյակը: Նստավայրն ունի ցուցանակ: Միակ նստավայրն է, որ գրասենյակում այցելուների համար աթոռներ ունի: Այստեղ կա դատական նիստերի մեկ դահլիճ, որը չունի հա-մապատասխան կահույք չկա: Դատավարության գոտին առանձնացված չէ հասարակական գոտուց: Դահլիճը չունի սենյակներ վկաների և ամբաստանյալի համար, ինչպես նաև դատավարության մասնակիցների՝ փաստաբանի, պետական մեղադրողի համար: Դահլիճը չունի նաև խորհրդակցական սենյակ: Յուրմունք տվողների համար ամբիոն կա:

Դատավարության գոտում առանձնացված են տեղեր փաստաբանի և մեղադրողի համար: Դատավորը դահլիճ է մտնում նույն մուտքից, որից ներս են մտնում դատավարության մնացած մասնակիցները և հասարակությունը: Ամբաստանյալին ևս դահլիճ են բերում նույն մուտքից: Դատավորի տեղաշարժի ուղիները մեկուսացված չեն հասարակության հետ շփվելու հնարավորությունից: Դատավորի աշխատասենյակից դեպի դահլիճ ծառայողական մուտք չկա: Դահլիճը չի ջեռուցվում, և տեղական կլիմայական պայմաններում առնվազն 6 ամիս այն անօգտագործելի է:

Ենթաբաժին 2. Շիրակի մարզի առաջին ատյանի դատարան

Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանը գտնվում է Գյումրի քաղաքում:

Բոլոր դատավորների աշխատասենյակները գտնվում են ժամանակավոր տնակներում կամ հարմարեցված շինություններում: Տնակային առանձնասենյակները, բացառությամբ դատարանի նախագահի աշխատասենյակից, չունեն ընդունարաններ: Դատավորների աշխատասենյակները ծառայում են և որպես դատական նիստեր անցկացնելու սենյակ, և որպես աշխատասենյակ դատավորի, իր օգնականի և քարտուղարի համար, և որպես ընդունարան, և որպես խորհրդատվության ու հանդիպումների վայր:

Դատավորներից մեկի պատկերավոր արտահայտությամբ, ինքն ունի աշխարհում ամենամեծ ընդունարանը՝ որպես այդպիսին մատնանշելով դատարանի բակը:

Դատավորների սենյակների տարածքը 12-ից 24 քմ է, իսկ երկու հաստիքների ավելանալուց հետո 2 դատավորների 12 քմ առանձնասենյակները կիսվել են 9-ական քմ առանձնասենյակների, որոնցում կայանում են դատական նիստեր, և հաճախ դատավորի և ամբաստանյալի միջև տարածությունը 1,5-2 մետր է: Սակայն յուրաքանչյուր դատավոր ունի իր աշխատասենյակը:

Հեռախոսների ընդհանուր քանակը դատարանում, ներառյալ դատարանի գրասենյակը, 9-ն է: Հեռախոսները պարբերաբար անջատվում են մուծումներ չկատարելու պատճառով, կամ մուծումը կատարվում է դատավորի անձնական միջոցների հաշվին: Ավելի մեծ մուծումներից խուսափելու համար, բացառությամբ դատարանի նախագահի հեռախոսից, մյուս հեռախոսները չունեն միջադաշին խոսակցության կող, որը դժվարացնում է օպերատիվ աշխատանքը: Մեծ դժվարությամբ կատարվում են ընթացիկ մուծումները և առկա է հեռախոսավճարի մեծ պարտք:

Դատարանի գրասենյակը գտնվում է հարմարեցված ժամանակավոր շինության մեջ 60քմ ընդհանուր տարածքով և իրենից ներկայացնում է 4 միջանցիկ սենյակներ: Յուրաքանչյուր այցելու ակամա խանգարում է նախորդ երեք սենյակների բնականոն աշխատանքը: Եթե նկատի առնենք նաև այն, որ պայմանների բացակայության պատճառով, գրասենյակը ծառայում է նաև որպես արխիվ (միայն ընթացիկ գործերն են գտնվում երկաթյա անկիզգելի պահարաններում, մյուս գործերը բաց վիճակում են՝ դրված են դարակների վրա) և իրեղեն ապացույցների պահասենյակ (նույնպես բաց վիճակում), այդ թվում նաև բռնագրավված թմրադեղեր, ապա պատկերը բավականաչափ պարզ կլինի և ակնհայտ է,

որ այդ ամենը կարող է ամենատարբեր անկախատեսելի հետևանքներ ունենալ, ինչպես նաև ծառայել որպես հոգեբանական գործոն, երբ նույն սենյակում գտնվում են մահացածի կամ դանակահարվածի իրերի հետ:

Քաղաքացիների ընդունելության պայմանները ծայրահեղ վատ են:

Գրասենյակի պետի աշխատասենյակը առանձնացված չէ և որպես այդպիսին ծառայում է միջանցիկ սենյակներից մեկը:

Դատարանի բոլոր տարածքներում, ներառյալ հիմնական վթարային շենքի նիստերի դահլիճը, չկա կենտրոնացված ջեռուցում, ձմռան ընթացքում տաքացվում են հեղուկ վառելիքի վառարանների, էլեկտրատաքացուցիչների կամ գազի միջոցով:

Բոլոր դատավորներն ունեն դատական նիստերի քարտուղարի և օգնականի մեկական հաստիք, ինչպես նաև մեկական գրասենյակի քարտուղար յուրաքանչյուր նստավայրում, որոնցից միայն երեքը ունեն բարձրագույն իրավաբանական կրթություն, մյուսներն ունեն բարձրագույն ոչ մասնագիտական, միջնակարգ մասնագիտական (ոչ միշտ՝ իրավաբանական) կամ ընդհանուր միջնակարգ կրթություն:

Բացառությամբ 3 դատավորների, մյուսները իրենց քարտուղարների հետ աշխատում են նույն տարածքում, ինչը խանգարում է բնականոն գործընթացին:

Համաձայն աշխատանքային հաստիքացուցակի դատարանն ունի մեկ հաշվապահ և մեկ գանձապահ, պարետներ յուրաքանչյուր նստավայրում, 2 ցրիչ Գյումրիում և մեկական՝ յուրաքանչյուր նստավայրում, ցրիչները և հավաքարարները աշխատում են մեկ ընդհանուր հաստիքի տակ: Յրիչների հետ զրույցի արդյունքում պարզվեց, որ նրանք տրանսպորտից օգտվելու համար որևէ լրավճար կամ արտոնություն չունեն, Գյումրիում և մյուս նստավայրերում փոստային ծառայության կաթվածահար վիճակի և տնակային տնտեսությունների հասցեների խառնաշփոթի պատճառով մեծ ծավալի աշխատանք են կատարում, որը որևէ կերպ չի փոխատուցվում:

Դատարանն ունի արխիվ, որի պայմանները անհարիր են նման հաստատության պահանջների հետ: Ինչպես վերևում նշվեց, քաղաքացիական գործերը պահվում են բաց վիճակում, իսկ քրեական գործերը որպես արխիվ ծառայող երկաթյա դռով 20 քմ խոնավ սենյակում, որտեղ պահվում են նաև իրեղեն ապացույցներ և առկա են կրծողներ:

Իրեղեն ապացույցների առանձին տարածք չկա, ձեռքակալության ժամանակ առգրավված իրերը, որպես կանոն, դատարան չեն բերվում:

Դեպի դատարան կա միայն մեկ մուտք երկաթյա դարպասով, որը ծառայում է և դատարանի ծառայողական աշխատակազմի, և այցելուների, և ամբաստանյալների ու նրանց ուղեկցողների համար: Միայն դատական նիստերի մեծ դահլիճն ունի 9 քմ խուց ամբաստանյալների և նրանց ուղեկցողների համար՝ մետաղյա վանդակով:

Մարզի տարածքում բնակավայրերի մաքսիմալ հեռավորությունը դատարաններից 10-15 կմ է, դատական նիստերը, որպես կանոն, սկսվում են ժամը 11.00-ին և տրանսպորտային երթուղիներն ու չվացուցակը հնարավորություն տալիս են նշված ժամին դատարան հասնելու համար: Ամենամոտ կանգառը դատարանի շենքերից հեռու է 50-200 մետր: Դատարանը չունի տրանսպորտային ոչ մի միջոց և ծառայողական մեքենա, չունի ավտոկանգառ:

Դատարանն ունի մուտքի ցուցանակ: Յուրաքանչյուր դատավորի աշխատասենյակի մուտքի մոտ փակցված է դատավորի անունով և պաշտոնով ցուցանակ: Գյումրու դատարանի հիմնական շենքը կառուցվել է 20-րդ դարի սկզբին, վթարային է, ենթակա է ամրացման, քանի որ պատմամշակութային կառույց է և մտնում է Կումայրի արգելոցի տարածքի մեջ: Հիմնական շենքից օգտագործվում է միայն մեկ հարմարեցված, կիսանկուղային նիստերի դահլիճ, որը ամրացված և վերանորոգված չէ, չի ջեռուցվում: Նրա՝ դատական նիստերի համար հարմարեցնելը իրագործվել է դատարանի նախագահ Է. Մանուկյանի նախաձեռնությամբ: Ունի երկու մուտք, նախասրահ, մետաղյա վանդակ ամբաստանյալների համար, 30 նստատեղ:

Արթիկի, Աշոցքի և Ախուրյանի դատարանի շենքերը համապատասխանում են Խորհրդային Միության ժամանակ գործող դատարանի նորմերին, սակայն դրանք վթարային են և հետերկրաշարժյա շրջանում չեն վերոնորոգվել:

Դատարանի ոչ մի շինության ու տարածքի մուտք հարմարեցված չէ հաշմանդամների համար:

Յերեկային ժամերին դատարանի շենքի պահպանություն չի իրագործվում, կա միայն գիշերային պահակ: Դատարանը չունի մուտքի էլեկտրոնային որևէ սարքավորում:

Դատարան մտնող անձանց վերահսկում չի իրականացվում, որևէ փաստաթուղթ չի ստուգվում, առանձնացված չեն պարզագույն տեղեկատվություն ապահովող ծառայողներ: Դատավորներից միայն երկուսն ունեն հաշվարկային /տաբելային/ զենք:

Դատարանը չունի հանդերձարան:

Չկա հայտարարությունների տախտակ: Անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար այցելուները դիմում են դատարանի գրասենյակ, դատավորներին, օգնականներին, քարտուղարներին, այլ այցելուներին:

Քանի որ համարյա բոլոր տարածքները առանձին տնակներ և շինություններ են, ապա չունեն միջանցք, կամ առկա են վագոն-տնակների փոքրիկ նախասրահներ: Նիստերի միակ դահլիճը ունի միջանցք, դահլիճի ողջ երկարությամբ, որը ծառայում է որպես նախասրահ, երբևէ չի վերանորոգվել: Քանի որ բոլոր շինությունները առաջին հարկում են, չունեն աստճաններ: Միայն դատարանի գրասենյակը, որը հարմարեցված տնակային շինություն է երկրորդ հարկում, ունի բաց բետոնյա աստիճաններ: Միջանցքներում չկան աթոռներ և նստարաններ, 2 նստարան կա դատարանի բակում: Դատարանի տարածքում չկա խմելու ջրի ծորակ:

Ողջ դատարանն ունի մեկ հնաճ գուգարան, որը օգտագործվում է միայն դատարանների աշխատակիցների կողմից և բանալիով փակ է: Չուգարանը չունի էլեկտրական լուսավորություն:

Դատարանում չկան ավտոմատ-հեռախոսներ, թերթի կրպակ, իրավական գրականության վաճառք չի իրագործվում, չկա բուֆետ կամ սննդի այլ օբյեկտ:

Դատարանն ունի 4 գրամեքենա, որոնցից 2-ը էլեկտրոնային են, 2-ը՝ մեխանիկական: Դատարանը չունի համակարգիչ և այլ օրգտեխնիկա: Օգտագործվող միակ համակարգիչն ու պատճենահանը դատարանի նախագահի անձնական ներդրում են:

Դատարանը չունի իրավական գրադարան: Դատավորների աշխատասենյակներում առկա իրավական գրականությունը հիմնականում դատավորների անձնական գրականությունն է:

Դատարանը փաստացի չունի նիստերի դահլիճ: Ինչպես վերևում նշվեց, կա մեկ համարեցված տարածք, որի մակերեսը 70 քմ է, այցելուների համար 30 նստատեղով (փայտյա նստարաններ չորս նստատեղով): Շարքերի միջև տարածությունը 80 սմ է, պրոցեսուալ գոտին պայմանականորեն է առանձնացված մնացած տարածքից, առկա է մետաղյա վանդակ (6 քմ), հատակը բետոնյա է, պատուհանները բացվում են դեպի նախասրահ – միջանցք: Դահլիճը չունի լավող գործերի և նիստերի ժամերի տեղեկատվությամբ ցուցատախտակ: Դահլիճի լուսավորումը իրագործվում է էլեկտրականության միջոցով, քանի որ այն կիսանկուղային տարածք է, և պատուհանները բացվում են դեպի միջանցք: Նիստերի դահլիճը, բացի ամբաստանյալների սենյակից, այլ կից կառույցներ չունի, որպես խորհրդակցական սենյակ ծառայում է գործը քննող դատավորի աշխատասենյակը:

Նիստերը ոչ միշտ են սկսվում հայտարարված ժամին:

Դատական նիստերի արձանագրությունը սղագրում է նիստի քարտուղարը: 12 քարտուղարներից միայն 3 ունեն քարձրագույն մասնագիտական կրթություն և սղագրության մեծ մասը թելադրում է նիստը վարող դատավորը: Նիստերի ձայնագրում իրագործվում է կողմերի համաձայնության դեպքում՝ դատարանի որոշմամբ:

Ոչ դատարանի շենքի վրա, ոչ էլ նիստերի դահլիճում չկան պետական խորհրդանիշներ՝ դրոշ և զինանշան: Սեղանի վրա դրվող դրոշակ և զինանշան կա դատավորների առանձնասենյակներում, որոնք հաճախակի ծառայում են որպես դատական նիստերի անցկացման վայր:

Դատարանը հակահրդեհային պաշտպանության ոչ մի միջոց չունի, չնայած ջեռուցման վերոնշյալ ձևերը և դատարանի ընդհանուր պայմանները յուրաքանչյուր պահ կարող են հրդեհի պատճառ դառնալ:

Ենթաբաժին 3. Մյունիքի մարզի առաջին ատյանի դատարանին

Մյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը տեղաբաշխված է Կապանի քաղաքային ներքին գործերի բաժնի հետ համատեղ վարչական շենքում: Վերջերս մարզային

դատախազությունը, որը նույնպես տեղաբաշխված էր նույն շենքում, տեղափոխվել է, և ազատված շինությունները տրամադրվել են դատարանին:

Սիսիանի և Գորիսի նստավայրերը նույնպես տեղաբաշխված են ներքին գործերի բաժնի հետ համատեղ շենքում և զբաղեցնում են երեք հարկանի շենքի երրորդ հարկի մի մասը: Մեղրիում նստավայրը իրենից ներկայացնում է երկու սենյականոց տարածք վարչական շենքում, իսկ դատական նիստերը անց են կացվում Կապանում:

Դատարանի նախագահի աշխատասենյակի տարածքը 36 քմ է, իսկ ընդունարանը՝ 18 քմ, հանգստի սենյակը՝ 18 քմ, դատավորների աշխատասենյակների տարածքը՝ 18-20 քմ, իսկ ընդունարանները մոտ 8 քմ:

Գորիսի և Սիսիանի նստավայրերի դատավորների աշխատասենյակների տարածքը կազմում է 17-18 քմ, իսկ ընդունարանները՝ 8-9 քմ:

Սիսիանի նստավայրում դատավորի հանգստի սենյակը մոտ 10 քմ է, իսկ Գորիսի նստավայրում՝ 8,1 քմ:

Առկա են աշխատասենյակներ դատավորների օգնականների և դատական նիստերի քարտուղարների համար՝ ամեն մի սենյակում 2-3 աշխատակից:

Դատարանի գրասենյակի պետը ունի առանձին աշխատասենյակ 12 քմ տարածքով, Գորիսի և Սիսիանի նստավայրերում նախատեսված չէ:

Դատարանն ունի դատական նիստերի մեծ և փոքր դահլիճ: Մեծ դահլիճը ունի 310 նստատեղ, իսկ փոքրը՝ 160:

Գորիսի և Սիսիանի նստավայրերը չունեն դատական նիստերի մեծ դահլիճ, առկա է ընդամենը մեկ դահլիճ՝ Սիսիանում, մոտ 26 քմ, Գորիսում՝ 48,7քմ տարածքներով /60 նստատեղ/:

Քանի որ դատարանը և նստավայրերը տեղաբաշխված են ներքին գործերի բաժնի հետ համատեղ շենքերում, առկա է պահակակետ՝ դատարանի շենքի շուրջօրյա պահպանությունն ապահովելու համար:

Հաճախորդների ընդունելության համար նախատեսված է տարածք, սակայն դատավարության մասնակիցների համար՝ ոչ /փաստաբան, դատախազ/:

Ամբաստանյալների համար հատուկ խուց նախատեսված չէ, սակայն օգտագործվում է նույն շենքում տեղաբաշխված ներքին գործերի բաժնի նախնական կալանքի խուցը /12 քմ/:

Նույնը վերաբերվում է նաև Գորիսի և Սիսիանի նստավայրերին:

Դատարանում և նստավայրերում բուֆետ ընդհանրապես նախատեսված չէ:

Հատուկ իրավաբանական գրադարան դատարանը չունի, բայց դատավորները իրենց առանձնասենյակներում նվազագույն անհրաժեշտ գրականությունն ունեն, որն իրականում ձեռք է բերվում անձնական միջոցների հաշվին: Գրականության մեծ կարիք կա: Մոտ ապագայում գրադարան նախատեսվում է ստեղծել դատախազության կողմից ազատված տարածքներում:

Դատարանն ունի մուտքի ցուցանակ, նստավայրերը՝ ոչ: Յուրաքանչյուր դատավորի աշխատասենյակի մուտքի մոտ փակցված է դատավորի անունով և պաշտոնով ցուցանակ: Դատարանի ոչ մի շինություն և տարածքի մուտք հարմարեցված չէ հաշմանդների համար:

Դատարանը չունի հանդերձարան:

Հայտարարությունների տախտակ գոյություն ունի, սակայն փակցված տեղեկությունները հին են: Անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար այցելուները դիմում են դատարանի գրասենյակ, դատավորներին, քարտուղարներին կամ այլ այցելուներին:

Դատական նիստերի դահլիճներն ունեն ընդհանուր մուտք և մուտք խորհրդակցական սենյակից:

Բոլոր դատական նիստերի դահլիճներն ունեն խորհրդակցական սենյակներ՝ 10 քմ տարածքով: Ունեն առանձին մուտքեր դատական նիստերի դահլիճներից և դատավորները

տեղաշարժվելուց այցելուների հետ չեն առնչվում: Խորհրդակցական սենյակները սանհանգույցներ չունեն: Առանձին սանհանգույց նախատեսված է միայն դատարանի նախագահի համար, իսկ դատարանում առկա սանհանգույցը ընդհանուր օգտագործման համար է նախատեսված:

Դատարանը չունի համակարգիչ և տեխնիկական այլ միջոցներ:

Ընթացիկ և ավարտված գործերի համար արխիվի տարածք է նախատեսված:

Ծառայողական ավտոմեքենաներ և տրանսպորտի այլ միջոցներ դատարանը չունի, այն դեպքում, որ դատավորները հաճախակի գործուղվում են դատական նիստերի նստավայրեր:

Ինչպես Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի մարզերի առաջին ատյանի դատարանների, այնպես էլ նստավայրերի աշխատանքային պայմանների մասին առավել մանրամասն տեղեկատվությունը և դրանց համեմատական բնութագիրը ԱՊՀ երկրների դատարանական շենքերի նախագծման և շինարարության միջպետական կանոնների ու չափորոշիչների հետ ներկայացվում է մոնիտորինգի զեկույցի հավելվածում:

Բաժին 5. ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունն ընտրել է ժողովրդավարական զարգացման և իրավական պետության կառուցման ուղին, այդ իսկ կապակցությամբ դատաիրավական բարեփոխումները դարձել են պետության կարևորագույն խնդիրներից:

Քաղաքական, տնտեսական, օրենսդրական բարեփոխումները բարձրացրել են դատական մարմինների դերն ու նշանակությունը հասարակության մեջ և առաջին հերթին մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում, քանի որ, դատարանը հանդիսանում է օրենքի գերակայությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը ապահովող հիմնական ինստիտուտը: Օրենսդրական բարեփոխումները լայն հնարավորություններ են ընձեռել իրավահարաբերությունների մասնակիցներին իրավունքի խախտման կապակցությամբ դատական պաշտպանության դիմելու միջոցով:

Ըստ օրենքի, առաջին ատյանի դատարանը քննում է բոլոր քաղաքացիական, տնտեսական, քրեական, զինվորական, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, օրենքով սահմանված կարգով լուծում է կալանավորման, բնակարանի խուզարկության թույլտվության, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հարցեր /վերջերս ձևավորվել են առաջին ատյանի տնտեսական դատարանները և համապատասխանաբար տնտեսական գործերը քննում է այդ դատարանը/:

Հաշվի առնելով առաջին ատյանի դատարանի կողմից ըստ էության քննվող գործերի քանակը, բազմազանությունը, բազմաբնույթ լինելը, նաև այն հանգամանքը, որ առաջին ատյանի դատարանը հանդես է գալիս, ըստ օրենքի, մեկ դատավորի կազմով, դժվար չէ պատկերացնել առաջին ատյանի դատարանի դատավորների ծանրաբեռնվածության աստիճանը:

Այս իրավիճակում շատ կարևոր է, թե ինչ աշխատանքային պայմաններում են իրենց գործունեությունը իրականացնում դատավորները, և թե ինչ տեխնիկական սարքավորումներով է ապահովված դատարանը:

Դատարանների շենքային պայմանների անհամապատասխանությունն ընդունված չափորոշիչներին և ենթակառուցվածքի բացակայությունը չեն նպաստում, իսկ շատ դեպքերում

նաև խոչընդոտում են դատարանների և դատավորների բնականոն գործունեությանը և առաջացնում դժվարություններ արդարադատության իրականացման, կողմերի դատավարական իրավունքների լիարժեք ապահովման գործընթացի համար:

Բոլոր դատարաններն ու դատավորները գործում են գերժանաբեռնված՝ բազմաթիվ առարկայական և ենթակայական պատճառներով:

Չկա դատարանների և դատավորների անվտանգության ապահովման հստակ համակարգ, շենքերից ոչ մեկը չունի մուտքի էլեկտրոնային սարքավորումներ, լիարժեք չի իրագործվում շենքերի պահպանության հարցը, չկա դատական նիստերի դահլիճների հստակ ֆունկցիոնալ բաժանում և կահավորում, ավարտված և ընթացիկ գործերի պահպանության ապահով տարածքներ, դատարաններից ոչ մեկը չունի ծառայողական մեքենա կամ այլ տրանսպորտային միջոց, որի անհրաժեշտությունը պայմանավորված է մարզերի տարբեր նստավայրերում ժամանակին դատական նիստերի անցկացումով և դատավորների անվտանգության պահպանմամբ: Բացակայում են հակահրդեհային միջոցները:

Դատարաններն ապահովված չեն ժամանակակից համակարգչային տեխնիկայով, սարքավորումներով (համակարգիչ, տպիչ, պատճենահան) և կապով (էլեկտրոնային կապ, հեռատիպ): Օրենքով նախատեսված բազմաթիվ դատավարական գործողություններ իրականացնելու համար /կողմերի պատշաճ ծանուցում դատական նիստի ամսվա, ժամի և վայրի վերաբերյալ վճռի կամ դատավճռի հրապարակումից հետո որոշակի, օրենքով սահմանված ժամանակահատվածում այդ դատական ակտերի ուղարկելը կողմերին և շատ ու շատ այլ գործողություններ/ դատարանին ուղղակի անհրաժեշտ է համակարգչային պատճենահանման և այլ օրգտեխնիկա, կապի ժամանակակից միջոցներ: Թեկուզև տեխնիկական պատճառներով, օրինակ՝ կողմերին դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի ոչ նախատեսված ժամկետում հասնելը, հնարավոր է դատավարության որևէ կողմին գրկել նրա բողոքարկման իրավունքից որոշակի օրենքով սահմանված ժամկետում ավելի բարձր դատական ատյան, որը իհարկե կարելի է որակել որպես արդար դատավարության մարդու իրավունքի խախտում:

Դատարանների շենքերից ոչ մեկը հարմարեցված չէ հաշմանդամների համար, որը դատարանի հրապարակայնության և դատարանի մատչելիության իրավունքի ապահովմանը խոչընդոտ հանդիսացող հանգամանք է, այն դեպքում, որ հաշմանդամները Հայաստանի Հանրապետության լիիրավ քաղաքացիներ են:

Դատարանների լիարժեք աշխատանքին և անկախությանը չեն նպաստում նաև նույն շենքում այլ կառույցների (նոտարական գրասենյակ, փաստաբանական ծառայություն, անձնագրային սեղան, ներքին գործերի բաժին, դատախազություն, արվեստի դպրոց, դատական ակտերի հարկադիր կատարման գրասենյակ և այլն) առկայությունը:

Դատարանների լիարժեք աշխատանքին չի նպաստում նաև օժանդակ կառույցների բացակայությունը՝ խոհրդակցական սենյակ, վկաների կամ կողմերի սենյակ, ամբաստանյալի սենյակ, դատական գործերի հետ ծանոթանալու սենյակ, գրադարան, համակարգչային սենյակ, արխիվ, իրեղեն ապացույցների սենյակ, հանդերձարան, բուֆետ, հանգստի սենյակ, անհրաժեշտ քանակությամբ սանհանգույցներ, սպասարկող անձնակազմի սենյակ, անվտանգություն ապահովող ծառայողների սենյակ և այլն:

Դատարանների շենքերը և նիստերի դահլիճները ապահովված չեն համապատասխան պետական խորհրդանիշներով՝ պետական դրոշ, զինանշան: Չկան հայտարարությունների և այլ տեղեկատվության տախտակներ, ուղղորդող ցուցանակները կամ բացակայում են, կամ հնացած:

Օժանդակ աշխատակազմի պայմանները չեն համապատասխանում չափորոշիչներին, ինչպես նաև նրանց գերակշիռ մասի ոչ մասնագիտական կրթությունը խոչընդոտում է լիարժեք աշխատանքի իրագործմանը:

Բաժին 6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի առաջին ատյանի դատարանների աշխատանքային պայմանների մոնիտորինգի արդյունքները ցույց տվեցին, որ դատարանների և դատական գործընթացի աղքատությունն ու տեխնոլոգիական անկատարությունը, դատարանների արտադրական տարածքների սանիտարա-հիգիենիկ և տեխնիկական տարրական նորմերի համատարած խախտումները, դատական գործընթացները սպասարկող տեխնիկական անձնակազմի մասսայական պրոֆեսիոնալ անիրազեկությունը չեն նպաստում դատական գործընթացի անկախությանը և, որպես հետևանք, հանգեցնում են մարդու իրավունքների մասսայական խախտումների:

Ելնելով վերոնշյալից՝ Ա.Գ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնը Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններին առաջարկում է.

1. նպատակապես և հետևողական աշխատանք տանել Գյումրիում, Գավառում և Կապանում առաջին ատյանի դատարանների նոր շենքերի կառուցման և Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերի համարյա բոլոր նստավայրերի շենքերի վերակառուցման կամ հիմնավոր նորոգման ուղղությամբ,
2. մշակել և հաստատել առաջին ատյանի դատարանների տիպային շենքերի շինարարության և կահավորման տեխնիկական չափանիշները: Այդ շենքերի համար որպես չափորոշիչներ հիմք ընդունել ԱՊՀ երկրների առաջին ատյանների դատարանների շենքերի նախագծման և շինարարության միջպետական կանոններն ու ՀՀ դատական շենքերի նախագծման ուղեցույցը (ՀՀ Արդարադատության նախարարություն, ՀՀ դատարանների խորհուրդ),
3. մշակել և առաջին ատյանի դատարաններ ուղարկել դատական նիստերի դահլիճների ճիշտ կահավորման հանձնարարականներ: Համագործակցել միջազգային զարգացման գործակալությունների և կազմակերպությունների հետ դահլիճների կահավորման համար անհրաժեշտ ֆինանսավորում ձեռք բերելու համար,
4. վերանայել և հաստատել առաջին ատյանի դատարանների և նրանց նստավայրերի տիպային հաստիքացուցակը,
5. մշակել և հաստատել առաջին ատյանի դատարանների տիպային բյուջեների կառուցվածքը և ըստ հողվածների հատկացումները, որոշել առաջին ատյանի դատարանների և նստավայրերի տիպային բյուջեների ծախսումային հատվածի ֆինանսավորման աղբյուրները,
6. որոշել Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի առաջին ատյանի դատարանների և նրանց նստավայրերի՝ դատական և տարածաշրջանների իրավապահ մարմինների միջև տեղեկատվության փոխանակումն ապահովող կապի համակարգը:

Մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի առաջին ատյանի դատարանների որոշումները հասցեատերերին օրենսդրությամբ պահանջվող ժամկետներում հասցնելու առաջարկություններ (ՀՀ Արդարադատության նախարարություն, ՀՀ Կապի և տրանսպորտի նախարարություն),

7. մշակել և հաստատել առաջին ատյանի դատարանների մասնագիտական գրադարանների համար անհրաժեշտ միջազգային և ազգային իրավունքի գրականության ցուցակը: Ստեղծել խելամիտ ժամկետներում մասնագիտական գրադարանների օրենսդրական և նորմատիվային ակտերի արդիականացումն ապահովող համակարգ,
8. մշակել և ներդնել առաջին ատյանի դատարանների և նրանց նստավայրերի աշխատակիցների, բացառությամբ դատավորների, գործունեությունը կարգավորող տիպային հանձնարարականներ (ՀՀ Արդարադատության նախարարություն),
9. անցկացնել առաջին ատյանի դատարանների աշխատակիցների, բացառությամբ դատավորների, ատեստացիա՝ զբաղեցրած պաշտոնին մասնագիտական համապատասխանությունը որոշելու նպատակով (ՀՀ Արդարադատության նախարարություն): Ստեղծել դատավորների և դատարանների աշխատակազմերի մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացային և սեմինարային երկարաժամկետ և պարբերական ուսուցման ու ստուգարքային համակարգ:

Առաջին ատյանի դատարանների ծառայողների պատրաստման ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել քաղաքացիների հետ հաղորդակցման վարվելակերպի կանոնների, գործավարության և արխիվավարության, սղագրության և նրանց գործունեության բնույթի հետ կապված այլ առանձնահատկությունների վրա:

10. կազմակերպել որակավորման բարձրացման մշտական գործող դասընթացներ առաջին ատյանի դատարաններին և նրանց նստավայրերին սպասարկող հատուկ անձնակազմի՝ ոստիկանության աշխատակիցների և զինվորական ծառայողների համար՝ դատական ողջ գործընթացի անվտանգությունն ապահովելու նպատակով (ՀՀ Արդարադատության նախարարություն, ՀՀ Ներքին գործերի նախարարություն, ՀՀ Պաշտպանության նախարարություն),
11. պայմաններ ստեղծել դատարանների և դատավորների անվտանգության ապահովման համար, առաջին ատյանի դատարաններին տրամադրել ծառայողական մեքենաներ,
12. մշակել առաջին ատյանի դատարաններին համակարգչային ժամանակակից տեխնիկայով ու սարքավորումներով ապահովելու համալիր ծրագիր,
13. հետևողական աշխատանք տանել դատարանների շենքերում այլ կազմակերպությունների ու կառույցների առկայությունը բացառելու ուղղությամբ,
14. Ազգային ժողովի պետաիրավական հանձնաժողովում և կառավարության նիստում քննարկել ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթօրենսդրական դաշտի առկայության և անհրաժեշտության, այն լիարժեք դարձնելու հարցերը,
15. քննարկել դատավորների և դատարանների աշխատակազմերի աշխատավարձերի բարձրացման հարցը՝ որպես դատարանի ռեալ անկախության և օրենքի գերակայության երաշխիք,
16. դատարանների շենքերը մատչելի դարձնել հաշմանդամների համար,
17. ապահովել համապատասխան պետական խորհրդանիշների և դատարանի գործունեությունը լուսաբանող տեղեկատվության առկայությունը:

Ներկայացված առաջարկություններն իրագործելու համար նպատակահարմար ենք գտնում առաջարկել ՀՀ Արդարադատության նախարարությանը, օգտագործելով առկա մոնիտորինգի արդյունքները, համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ

համատեղ մշակել մի շարք ծրագրեր, որոնց իրագործումը թույլ կտա ազգային դատական համակարգի տեխնիկական վիճակը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին:

Ա.Գ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնը հայտնում է համագործակցելու իր պատրաստակամությունը առաջին ատյանի դատարանների աշխատանքային պայմանների բարելավմանն ուղղված այս և ուրիշ նախաձեռնություններում:

Մեր կազմակերպությունը կծավալի հանրային քաղաքականության քարոզչություն առաջին ատյանի դատարանների աշխատանքային պայմանների բարելավմանն ուղղությամբ, ինչպես նաև պարբերական մոնիտորինգներ կանցկացնի դատական իշխանության գործունեության այլ ոլորտներում:

ԱՊՐԻՂԱԾՈՒՄԻ ՂԾՔՆԱԾՈՒՄԻ ԾՔՄԻ

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր
3. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա
4. ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշի խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթը, Կոպենհագեն, 1990 թ.
5. Գատական մարմինների հիմնարար սկզբունքները, ընդունվել է ՄԱԿ-ի 7-րդ կոնգրեսի կողմից, Միլան, 26 օգոստոսի-6 սեպտեմբեր, 1985 թ.
6. Գատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների արդյունավետ իրականացման ընթացակարգեր, հաստատվել է ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի բանաձևով
7. Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքները, ընդունվել է ՄԱԿ-ի 8-րդ կոնգրեսի կողմից, Հավանա, 27 օգոստոսի-7 սեպտեմբերի, 1990 թ.
8. ՀՀ սահմանադրություն
9. «Հայաստանի Հանրապետության դատարանակազմության մասին» ՀՀ օրենք
10. «Հայաստանի Հանրապետությունում դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք
11. Ուղեցույց Հայաստանի Հանրապետության դատարանական շենքերի նախագծման, Երևան, 2000 թ.

Вопросник для судьи

Суда первой инстанции Ширакского марза

1. Какое количество уголовных дел и гражданских дел Вам приходится рассматривать в течение года, в среднем за месяц?
 - ✓ Сարեկան քննվում է մոտ 70 քրեական գործ և 250-300 քաղգործ: Ամսեկան միջինը 5-6 քր. գործ և 20-25 քաղ. գործ:
 - ✓ Տարվա ընթացքում դատարանը իմ նախագահությամբ քննության է առնում մոտավորապես 50-ից 60 քր. գործ, յուրաքանչյուր ամիս 4-ից 5 գործ, 150-ից 200 քաղ. գործ, յուրաքանչյուր ամիս 15-ից 20 գործ:
 - ✓ Տարեկան իմ կողմից քննվում է մոտ 70 քր. գործ և մոտ 250-300 քաղ. գործեր:
 - ✓ Լսվում է տարեկան շուրջ 300 քաղ. գործեր և 70 քր. գործ, որը ամսեկան կազմում է 25 քաղ. գործ և 6 քր. գործ:
 - ✓ Տարվա ընթացքում լսվում է մոտավորապես 60 քր. և 150 քաղ. գործեր:
 - ✓ Տարեկան մոտ 100 քր. և մոտ 400 քաղ. գործ:
2. Какой дополнительный инвентарь и в каком количестве необходим Суду?
 - ✓ Դատարանին անհրաժեշտ են օրգտեխնիկան: Դրա քանակը՝ ըստ դատավորների քանակը:
 - ✓ Յուրաքանչյուր դատարանի ամենից առաջ անհրաժեշտ է կահավորված աշխատասենյակ և դատական նիստերի դահլիճ, իրեն անհրաժեշտ պարագաներով և գույքով, որը Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանում բացակայում է:
 - ✓ Երբ հիմնական գույք ունեցանք նոր լրացուցիչ մասին կմտածենք:
 - ✓ Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանում չկա առաջին անհրաժեշտության գույք, իսկ ընդհանրապես զգացվում է համակարգիչի խիստ անհրաժեշտության:
 - ✓ Դատարանին անհրաժեշտ է շենք, աշխատասենյակներ, աշխատակիցների ավելի արդյունավետ աշխատելու համար և համակարգիչներ:
 - ✓ Եթե դատարանը ապահովված լիներ անհրաժեշտ գույքով, ապա միայն այդ դեպքում կարելի էր խոսել լրացուցիչ գույքի մասին:
3. Какое дополнительное техническое оснащение необходимо Суду?
 - ✓ Քանի որ դատարանում չկա տեխնիկա, դժվար է պատասխանել թե ինչ լրացուցիչ տեխնիկական է անհրաժեշտ:
 - ✓ Անհրաժեշտ են համակարգիչներ, ֆաքս, տպագրման և արտատպման ժամանակակից սարքավորումներ, կապի միջոցներ:
 - ✓ Պետք է համակարգչ. տեխնիկա:
 - ✓ Ժամանակակից տեխնիկական միջոցներ կապված դատարանի գործունեության հետ:
 - ✓ Համակարգչային տեխնիկա:
 - ✓ Դատարանը ապահովված չէ տեխնիկական միջոցներով, հետևաբար լրացուցիչ տեխնիկական միջոցների մասին խոսք լինել չէր կարող:
4. Каков доступ Судьи к необходимой специализированной литературе: есть ли необходимая литература в Вашем кабинете или она только в библиотеке / Если литература в кабинете, то сколько Судей пользуются ею?
 - ✓ Անհրաժեշտ գրականություն դատավորները հիմնականում ձեռք են բերում իրենց անձնական միջոցներով: Իմ կարծիքով խիստ անհրաժեշտ գրականություն կա: Դրանից կարող են օգտվել մյուս դատավորները, ինչպես ես օգտվում եմ մյուս դատավորների գրականությունից:
 - ✓ Առաջին անհրաժեշտության իրավաբանական գրականությունը առկա են աշխատասենյակում, յուրաքանչյուր դատավորի մոտ: Դատարանը գրադարան չունի:
 - ✓ Մասնագիտական գրադարան դատարանում չկա: Օգտվում եմ անձնական գրադարանից:
 - ✓ Առկա է որոշակի քանակությամբ մասնագիտական գրականություն: Կա մասնագիտական գրադարան և այդ գրականության կարիքն զգացվում է:
 - ✓ Անհրաժեշտ են օրենսգրքերի մենկաբանություններ և համապատասխան մասնագիտական գրադարան:
 - ✓ Ունեմ անձնական անհրաժեշտ գրականություն:
5. По-Вашему, какой необходимой спецлитературы не хватает в Вашей библиотеке?
 - ✓ Չկա մասնագիտական, հատկապես, ռուսական մասնագիտական ժուռնալներ:
 - ✓ Դատարանը գրադարան չունի:
 - ✓ Իրավունքի բոլոր ճյուղերը:
 - ✓ Օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր, մեկնաբանություններ և դատական պրակտիկայի վերաբերյալ գրականություն:
 - ✓ Մասնագիտական գրադարան դատարանը ընդհանրապես չունի: Այդպիսի գրադարանը դատարանին անհրաժեշտ է:
 - ✓ Աշխատանքի հետ կապված ունեմ անհրաժեշտ գրականություն:
6. Есть ли у Вас возможность пользоваться компьютером?

- ✓ Համակարգիչ չլինելու պատճառով՝ ոչ:
- ✓ Ինքս համակարգչային աշխատանքին առայժմ չեմ տիրապետում, սակայն իմ օգնականը հնարավորություն ունի այն օգտագործելու:
- ✓ Համակարգիչ չունենք, չնայած խիստ անհրաժեշտ է:
- ✓ Չկա:
- ✓ Համակարգից օգտվելու հնարավորություն չունենք:
- ✓ Չունեն անձնական համակարգիչ:

7. Когда Вы в последний раз проходили курсы повышения квалификации?

- ✓ Որակավորման բարձրացման հատուկ դասընթացների չեմ մասնակցում, սակայն հաճախում եմ տարբեր սեմինարների, որոնք բավական արդյունավետ են:
- ✓ 2001թ. առաջին եռամսյակում:
- ✓ Չեմ հիշում:
- ✓ Մեկ ամիս առաջ:
- ✓ Վերջին անգամ որակավորման դասընթացներ անցել եմ 2001թ. հունիս ամսին:
- ✓ 2001 թ. ապրիլին:

8. Как Вы их оцениваете?

- ✓ Ինչպես նշել եմ, սեմինարները արդյունավետ են:
- ✓ Բավարար կարելի է գնահատել ուսուցումը:
- ✓ Չեմ կարող ասել:
- ✓ Դրական, նման դասընթացները ուղղակի անհրաժեշտություն է:
- ✓ Նշված դասընթացներն ընթացել են արդյունավետությամբ, սակայն, ցանկալի է դասընթացները կազմակերպել տեղերում՝ համապատասխան մարզերում:
- ✓ Դրանք շատ անհրաժեշտ են և ցանկալի է, որ ավելի հաճախ կազմակերպվեն:

9. Какие темы затрагивались?

- ✓ Դրանք առնչվել են քաղաքացիական, քրեական իրավունքի, դատավարության տարբեր ինստիտուտներին, եվրոպական դատարանի գործունեությանը:
- ✓ Քաղաքացիական օրենսդրությանը վերաբերող:
- ✓ -----
- ✓ Կապված այսօրյա գործունեության, օրենքների փոփոխություններին, աշխատանքային գործունեության հետ, կապված առավել բարդ խնդիրների լուծմանը:
- ✓ Քրեական և քաղաքացիական օրենսդրության բնագավառների մի շարք խնդիրներ:
- ✓ Զննարկվել են նյութական և դատավարական իրավունքների վերաբերյալ բազմաթիվ հարցեր, ինչպես նաև Եվրախորհրդին մեր դատական համակարգի անդամակցության հարցը:

10. Как Вы считаете, необходимы ли Вам знания Международных правовых документов?

- ✓ Գտնում եմ, որ պարտադիր է:
- ✓ Ներկա ժողովրդավարական համակարգում խիստ անհրաժեշտություն է զգացվում, նկատի ունենալով նաև դատական համակարգի բարեփոխումները և միջազգային կապերը:
- ✓ Իհարկե անհրաժեշտ է:
- ✓ Անհրաժեշտություն է:
- ✓ Միջազգային իրավական փաստաթղթերի գիտությունը մեր դատական համակարգին անհրաժեշտ է:
- ✓ Դրանք խիստ անհրաժեշտ են, քանի որ մենք անդամակցում ենք Եվրոդատարանի աշխատանքներին:

11. Какую зарплату Вы считаете достойной той работе, которую Вы выполняете?

- ✓ Գտնում եմ, որ ներկա պահին դատավորը պետք է ստանա 3.000 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ:
- ✓ Դատավորին աշխատանքին և կարգավիճակին համապատասխան աշխատավարձ, նյութական միջին բավարարվածության չափով:
- ✓ Մինչև 3.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:
- ✓ Կատարած աշխատանքի և ներկայիս պայմաններին համապատասխան, որպեսզի հնարավոր լինի միջին մակարդակի ապրելակերպ ստեղծել:
- ✓ Աշխատանքը որ կատարվում է մեր կողմից միջազգային եվրոպական չափանիշներին համապատասխան մեզ անհրաժեշտ է 1 մլն 500.000 դրամ, ավելի արդյունավետ աշխատելու համար:
- ✓ Շատ ծանրաբերված աշխատանք է, և պետք է փոխատուցվի շատ բարձր աշխատավարձով, սակայն ելնելով մեր հանրապետության ֆինանսական վիճակից, հարցի պատասխանը հնարավոր չէ տալ:

12. Какова должна быть зарплата технического персонала?

- ✓ Ոչ պակաս 150.000 դրամից:
- ✓ Նույնը պետք է ասել նաև դատարանի տեխնիկական անձնակազմի աշխատավարձի

վերաբերյալ:

✓ Մինչև 500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

✓ Նույն կարգով:

✓ Տեխնիկական անձնակազմի աշխատավարձը պետք է համապատասխանեցվի միջին շուկայական զամբյուղին և ներկայիս շուկայական հարաբերություններից առաջացող դժվարին պայմաններին:

✓ Ցանկալի է որլինի բարձր:

13. Что по-Вашему, можно было бы изменить без больших финансовых вложений?

✓ Արմատական բարեփոխումներ իրավական դաշտում, որը կապահովվեր դատավորի լրիվ անկախությունը գործադիր իշխանությունից: Սակայն առանց աշխատավարձի բարձրացման դատավորի լրիվ անկախություն հնարավոր չէ ապահովվել:

✓ Դատարանի շենքի ջեռուցման, կապի միջոցների (առաջին հերթին հեռախոսակապ), լուսավորության (էլեկտրաէներգիայի) ապահովման հարցերի բարելավումը:

✓ Դատարանին գույք, գրականություն:

✓ Հնարավոր չէ:

✓ -----

✓ Ոչ

Благодарим за сотрудничество.

И.О.Ф. судьи Суда первой инстанции Ширакского марза